

Անտառին ամենաբարձր ծառոց գա-
զաթանց վրայ կ'ելեն և իբրև թէ թե-
ռնենային՝ օդուն մէջէն ահագին աս-
պարէզ դէպ իրար կ'երկնան. փոփո-
խակի կը դիտեն զիրար և իրենց մոլեղ-
նութեան կատաղութեամբը՝ ամենայն
ինչ կը վրդովեն անտառին մէջ։ Այն-
պիսի ժամանակ աներկիւղ են ինչ և իցէ
վտանգէ. ոչ հրազինուց աղաղակը կա-
րող է զիրենք չփոթել և ոչ թերևս անտա-
ռին հրդեհիլը։ Շատ մալէացիք այսպի-
սի կատաղութեան ժամանակ փորձեր
են անոնց դիմագրաւ ելլելու և իրենց
թունաւորեալ նետերովը զանոնք վի-
րաւորելու. և դեռ չէ լսուած որ մէկ
մը այսպիսի յանդգնութեան մը զոհ
եղած ըլլայ։

Ըստ ճանապարհորդաց ոմանց Պօան
Նուր չկրնար մտնել, բայց ըստ Պ. Բին-
դոյի և իւր ընկերաց՝ Պօան ոչ միայն
Նուրէն չվախեր, այլ և շատ անգամ
Ովկիանու մրրկածուի ալեաց մէջ կը
մտնէ, և քանի մը ժամ աներևոյթ ըլ-
լալէն ետև՝ կը դառնայ իրեն միայնա-
բանը իբրև 'ի շրջագայութենէ կամ
յաշխարհակալութենէ. այս յանդուգն
արշաւանքը երբեմն ալ խմբովին կ'ընեն
Պօաները, կ'ըսէ Պ. Բինդոյ, բայց ոչ եր-
բեք տեսնուած է որ Ովկիանու մէջ
կռուին։

Այս յաղթանգամ կենդանին թէ-
պէտ և բազմաթիւ կը գտնուի Տելհի
շրջակայ անտառներուն մէջ, բայց ոչ
այնքան անհուն բազմութեամբ որ շատ
ճանապարհորդք կը ջանան հաստատե-
լու։ Դիտուած ալ է դարձեալ որ Տել-
հիի շրջակայքը ոչ իժ կը գտնուի և ոչ ու-
րիշ տեսակ սողուն, բաց 'ի այս Պօա
դազանէն։ Եւ այս նշան մըն է որ այս
օձը ամենայն սողնոց սպառիչ թշնամին
է, և բոլոր ստորնագոյն ցեղերը իր դժո-
խային որովայնին կերակուր ըլլալով
անհետացեր են, միայն զինքը միապե-
տական իշխեցող թողլով այն երկիւ-
ղալի միայնութեանց, ուստից ամենայն
շունչ ահուդողով կը հեռանայ. բայց և
այնպէս յանդուգն մարդկութիւնը վը-
տանգից դիմագրաւ և քաջութեան ա-

նուն մը ժառանգելու համար, կը հա-
մարձակի զինու զօրութեամբը այն ա-
հեղ իշխեցողը մարտի գրգռելու, և իր
իմաստութեամբը անոր անհուն բազ-
մանալը ընկճելու։

ԵԳԵՐԻԱ ՅԱԻԵՐԺԱՐՍԻՆ ԱՅՐԸ Ի ՀՌՈՄ

Ով որ Հռոմ՝ Սերաստիանոսի դռ-
նէն կ'ելէ, որ հին ատեն Ապպեան
դուռն էր, աւրուած ճամբէ մը՝ ամայի
և անբնակ ձոր մը կը հասնի։ Գետինը՝
հազարումէկ աղբիւրներէ ելող ջրերէ
ռոգուելով, ամենարգասաւոր կանա-
չութենէ մը ծածկած է։ Հոն տեղուանք
ուրիշ բնակութիւն չկայ՝ եթէ ոչ գեղա-
ցոց տնակները. և այն խորին լռութիւ-
նը կոտորոյները միայն թուչնոց գեղգե-
ղաձայն երգերն են։ Այն տեսարանին
վրայ չեմ գիտեր ինչ խստութիւն և
ինչ վսեմութիւն, կը տիրէ ու սիրտը
տխուր անգորրութեամբ մը կը լեցնէ,
ինչպէս թէ տաճարի մը առանձնու-
թեանը մէջը մտնայիր։ Այս ձորիս մէջ,
որ Քաֆֆարելլա կը կոչուի, է Եգերիա
յաւերժհարսին այրը, որուն հետ՝ Հռո-
մայ երկրորդ թագաւորը՝ Նումա Պոմ-
պիլիոս՝ գաղտնի խօսակցութիւններ ու-
նեցաւ, ու սորվեցաւ թէ ինչպէս պէտք
էր կարգաւորել կրօնական պաշտա-
մունքը՝ որ դից հաճոյագոյն ըլլան, և թէ
ինչպէս պէտք էր քուրմերը ըստ իւրա-
քանչիւր դից առանձին առանձին որո-
շել։

Այն անտառէն՝ որուն մէջ հին ա-
տենները յաւերժհարսիս նուիրած տա-
ճար մը կար, ուրիշ բան չկայ մնացած
այսօր՝ եթէ ոչ մէկ քանի դաբնիք. նոյն
խակ աղբիւրին վրայ՝ որ իրեք ճառա-
գայթի ձևով կը բղխէ, տեսակ մը այր
կ'ամբառնայ, որուն խորը՝ արձանա-
խորշի մը մէջ՝ դեռ ևս հին արձանի
մնացորդքը կը նշմարուին, որ մարդ մը
կը ներկայացնեն։ Յորեկուան լոյսը դը-

Ժուարաւ ներս կը թափանցէ, անանկ
որ կէս մթութիւն մը կը տիրէ, որ տեղ-
ւոյն ահեղ երևոյթ մը կու տայ: Այլին

վրան՝ թեղօջք և նոճիք իրենց ճիւղերն
կը շարժեն, մինչդեռ մուտքը առկա,
խեղ ուրթերով ու բաղեղամբք նկարա-



ԵԳԵՐԻԱ ՅԱԻԵՐԺԱՐՍԻՆ ԱՅՐԸ Ի ՀՌՈՄ

կերպ զարգարած է: Այս տեղի կանայք
ասկէ կու գան հնաձև ամաններով ջուր
առնելու, և մէջերնին այսպիսի կարծի-

քի մը հաւատք կու տան, որ Եգերիայ
աղբիւրին ջուրը տղայաբեր կանանց
առողջարար է: